ընդարձակ տեղի արտաքոյ քաղաքին Երուսաղէմի, և ապա ձեռն արկին շինել զայն վանք յանուն Ռուսաց. նախ պարսպեցին զտեղին շուրջանակի՝ և ապա հիմն արկին հոյակապ եկեղեցւոյ կաթուղիկէիւ և զանգակատամբ, շինեցին և զայլ փոքր եկեղեցի, կանգնեցին ընդարձակ Առաջնորդարան, հիւրատուն, իջեւանատեղի ուխտաւորաց, Հիւպատոսարան բոլոր պարագայիւք, պարտիզօք և ջրամբարօք, և այլ ամենայն կարեւոր պիտոյիւք արքայավայել ճոխութեամբ, ծախեալ գանձս բազումս, յոր աշխատեղեն գործաւորք բազում. և յետ անցանելոյ ժամանակաց եկն յերուսաղէմ մեծ Դուքսն Ռուսաց Նիկողայոս, որդի Նիկողայոսի Կայսեր, և ետ օծանել մեծ եկեղեցին Քրիստոս Ցոյն Պատրիարքի, և զկնի հանդիսաւոր պատարագի մեկնեցաւ 'ի Ցոպպէ, (1872).

Կոստանդին մեծ Դուքսն որդի Նիկողայոսի Կայսեր Ռուսաց եհաս 'ի Ցոպպէ, ունելով ընդ իւր զերիս մեծամեծ պատերազմական նաւս, բայց յերեւելի անձանց ընկերակցեալ էին նորին մեծութեան կինն եւ մանկահասակ որդին իւր. Պաշտօնեայք Օսմանեան Պետութեան, և եկեղեցականք քրիստոնէից սիրով և յարգանօք ընկալան զնա 'ի նաւահանգիստն, որ եւ իջեւանեցաւ 'ի վանս Ցունաց, ուր 'ի սենեկի սպասէր Երուսաղէմի Ռուս եպիսկոպոսն խաչիւ. իսկ մեծ Դուքսն յերեկոյեան ընկալաւ զայցելութիւնս այլ և այլ ազգաց, ընդ որս և զեկեղեցականս Հայոց՝ զորս առաքեալ էր Ցովհաննէս Պատրիարք յԵրուսաղէմէ՝ յողջոյն և 'ի պատիւ Նորին մեծութեան. Եւ 'ի վաղիւ անդր եկ 'ի ճանապարհ բազմութեամբ գնալ յԵրուսաղէմ, ուղեկից ունելով ընդ իւր զկղերս Ցունաց և Հայոց, և 'ի հասանիլ նորա 'ի դուռն քաղաքին՝ եդիտ ընդունելութիւն մեծ 'ի կողմանէ Քաղաքական իշխանութեան եւ 'ի կրօնական դասէ՝ և ուղղակի գնաց 'ի տաճարն Ս. Յարութեան և յետ երկրպագելոյ Գերեզմանին Քրիստոսի և Գողգոթայի, իջեւանեցաւ 'ի վանս Ցունաց. ապա եկն յուխտ եւ յայցելութիւն 'ի վանս Ս. Յակոբայ, զոր Ցովհաննէս Պատրիարք եւ միաբանք ուխտին եկեղեցական հանդիսիւ եւ մեծ շքով ընկալան յեկեղեցին՝ ապա 'ի Պատրիարքարանն, անտի 'ի Ս. Հրեշտակապետս և 'ի Ս. Փրկիչ՝ յա-